


ԲԵԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուրիարից Համար
Տարեկան ֆրք 10
Վեցամսեայ „ 5
ԿԱՆԻՒԿ

20

ՍԱՆԴԻՄ



ԲԵԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան ֆրք 12
Վեցամսեայ „ 6
ԿԱՆԻՒԿ

20

ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի հարաք օրերը: Մա-
նուցման տողը 10 Սանդիս: Երկու թիւ ա-
ռաջ հրատարակուած քերքը 40 Սանդիս:
Հրատարակուած գրութիւնը եւ յօդուածը:

Հարցե
DIRAN PAPA ZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ:

Վառնա, 6 Օգոստ 1898

Խմբագիր «Հայելի» հանդէսի.

Անակնկալներու շրջան մըն է որ
կ'անցնենք: Ամեն կերպ ազետաբեր կա-
կածներէ բոլորովին զերծ մարդիկ, հա-
կառակ իրենց դժնդակ կացութեան,
երբ կը վարանին արդար երկիւղով մը
Պոլիս երթալ, անդին հանրածանօթ
դէմքեր, ու մինչեւ իսկ quasi—յեզափո-
խականներ արձակ համարձակ կը մըտ-
նեն հոն ուր իրենց համար վտանգը
անխուսափելի ըլլալ կը կարծուէր: Ա-
սոնց կարգէն է նաեւ Պ. Հրանդ, որ իր
յայտնի ստորագրութեամբ տեղական
թերթերու մէջ, յեզափոխական շարժու-
մին մանրամասնութիւնները ընդգրկող
կարգ մը յօդուածներ հրապարակ նե-
տելէ յետոյ, մեզի համար անմեկնելի
միջոցով մը, անցեալ օր Վոսիփոլի գե-
ղածիծաղ ավերուին իր այցելութիւնը

տալու հապճէպ փութկոտութիւնը ու-
նեցաւ:

Պ. Հրանդ, իր վերջին ծանօթ հը-
րատակութիւններով բնականաբար կա-
կածելի անձնաւորութիւն մը դառնալէն
զատ, առաջուրնէ ալ Թուրք կառավա-
րութեան աչքին այնչափ հաւատարիմ
հպատակ մը չէր երեցած, և այս է պատ-
ճառը որ իր այս յանկարծական մեկնու-
մը անբացատրելի անակնկալ մը կը
թուի ինձ հետ շատերուն, որոնք շիտա-
կը և իրաւամբ գայթակղական կը գըտ-
նեն Պ. Հրանդի այս խիզախ (°) քայլը:

Մեզքը չառնենք սակայն, դուցէ
ծայրագոյն անխոհեմութիւն մ'է զոր
գործեց Հրանդ, բայց ինչ ոչ ալ ըլլայ
առ այժմ իր մեկնումը կարծուածէն
աւելի տխուր տպաւորութիւն մը թո-
ղած է ամենուն:

Կը խնդրեմ . . . Խմբագիր, հա-
ճեցէք ներկայս Ձեր անկողնակալ թեր-
թին մէջ հրատարակել և միանգամայն
անկեղծօրէն պարզել այս մասին Ձեր ալ
կարծիքը:

Մնամ բարեացակամ
ՌՈՒԲԷՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Հայելի. — Առ այժմ Պ. Հրանդի մեկնումը զարմանալի գտնելով հանդերձ, շարժառիթները մեզ անծանօթ ըլլալուն համար դժբաղդաբար չենք կրնար դեռ անկախ ու վճռական կարծիք մը յայտնել :

... Խմբագիր .

Կը խնդրեմ որ յանուն արդարութեան հրատարակէք հետեւեալը .

Այս չորեքշաբթի օրուան «Իրաւունք»ի մէջ հրատարակուած «Զոյցներէն զգուշանալ» վերնագրով յօդուածագրին կը յայտնեմ թէ՝ Զէյթունցիներուն թնդանօգի սայլակներուն լծուած ըլլալուն լուրը Ա. անգամ Պոլսոյ Պատրիարքարանին պաշտօնապէս իմացնողը՝ Զէյթունի Տ. Կարապետ քահանան էր, որ ի մէջ այլոց սապէս կը գրէր. «Երբ Զէյթունցիք իմացան որ գօմէշները քաղաքին զօրանոցին մէջ զետեղուելու համար բերուած թնդանօգները չէին կըրնար զառիվերը հանել, իրենք (Զէյթունցիք) ինքնաբերաբար (.) Լազեցիին այդ սայլակները վեր քաշեցին, «Փատիշահըմ չօգ եաշա» պոռալով. Պոլսոյ լրագիրներէն ճէրիտէի Շարգիէ ալ զայս հրատարակած էր, հետեւաբար, արդարութիւն չէր տեղական թերթ մը դատաւիտերու ելնելը այդ լուրը տուած ըլլալուն համար, և դատաւորի հովեր առնելով հարցնել թէ, ո՞վ տեսեր է, ո՞վ լսեր է Զէյթունցեաց թնդանօգի սայլերը քաշելը, և այլն :

Միմայն տեղական լրագիրները աչքէ անցնելու դիւրութիւն կամ ժամանակ ունեցող մը ասանկ խնդիրներումէջ պզտիկ չիմնալու համար յաւանդուող պատգամներ որոտալու չէ, որպէս զի հրապարակային բանակութիւններու գուռ չի բացուի, ի մեծ գլխու ցաւ լրագրի ընթերցողաց :

Վառնա, 6 Օոստ.

Գ. Գ.

—()—

Անցեալ շաբթու Պոլսոյ մէջ հրատարակուած օրէնքի մը համեմատ, ասկէ ետքը Տաճկաստանի մէջ տպագրական տառերու գնումը՝ 24 բաժնետէրերու սեպհական տուն մը առնելէ աւելի հաշարումէ՛լ ձեւակերպութիւններու (դժուարութիւններու) ենթարկուած է :

—()—

Սանդիակօի ամերեկեան բանալէն հայ կամաւոր զինուոր մը կը գրէ «Եփրատ»ի. «Մեր շօրաբանակին մէջ միայն երկու հայեր կան, երկուքն ալ ողջ առողջ են : Եթէ այս երկու թիւով ներքի է եղրակացութեան դալ, հայը լաւ զինուոր կրնայ ըլլալ» :

Իսկ եթէ զինուորութեան փախուստ տուող ռուսահայաստակ մէկ երկու զանաւալ՝ պոռոտախօսներու հարցնես, հայը ոչ զինուոր կրնայ ըլլալ եւ ոչ ալ լալու է՝ երբ առիթը ներկայանայ :

ՓԱՌԱԲԱՆՈՒ ԴԻԻՆ ԿԵՂԾԱՐԱՐԻՑ
ԵՒ ԽԱԶԱԳՈՂԻՑ

Բոժոժիկ կըսէ թէ, մեծ պահոց մէջ իրիկուն մը, խումբ մը դպիր տղաքներ, տան մը մէջ հաւաքուած, հետեւեալ փառաբանական քառուրդ կերպէն եղեր .

Ճնորհեա՛ մեզ տէր, ի գիշերի և ցորեկի զհանգստութիւն քո, և պահեա՛ զմեզ ի պատրանաց ուղղութեան ամենայաղթ զօրութեամբ սուրբ հանքի քո տէր 'Իրամ փրկութեան իմոյ ի տուէ կարդացի և գիշերի առաջի քո, մտցեն ձեռքերս իմ քեզմով լեցուն գրպանն իմ և պահեսցէ զմեզ յամենայն ժամ, առաքեա՛ ի մեզ տէր զզօրութիւն մատենիդ որ պահեսցէ զմեզ յամենայն ժամ, արժանի արա զերեկս և զցրեկս խաչագողութեամբ փառաւորապէս ապ-

րելոյ . արժանաւորեալ տէր զգիշերս հանգիստ քուն քաշելոյ և առանց փորձութեան պահելով զմեզ , ընդ մեզ , Ծօտղա՛ք , դիտասցիք կեղծիքս մեր և հըպարտեցարուք՝ զի Դրամն ընդ մեզ է . եւ լուարուք զայս ի ծագաց մինչև ի ծագս երկրի՝ զի Դրամն ընդ մեզ է : եւ զի երբէք և օր մը զօրանանք՝ դարձեալ մարիֆէթնիս ցոյց տացիք՝ զի Դրամն ընդ մեզ է : եւ զխորհուրդն զոր խորհի ժողովուրդն խափանենք մենք՝ զի Դրամն ընդ մեզ է : եւ զի ուզած ատեննիս անարդեւ Պոլիս մտանեմք և ապա ելանեմք՝ զի Դրամն ընդ մեզ է . եւ քանզի յերկիւզէ ժողովուրդին մենք ոչ երբևցուք և ոչ խռովիցուք՝ զի Դրամն ընդ մեզ է : եւ զտէր ոտովն անպետէն թըշնամոյն փառաւոր տրասցուք եւ նա եղիցի մեզ ապաւէն՝ զի Դրամն ընդ մեզ է : եւ ժողովուրդ որ նստէր կէս խաւարի , հիմա պիւսպիւթիւն ձգեցինք ի մթի՝ զի Դրամն ընդ մեզ է : եւ զի շատերնիս պօշ պօշ պտտեսցուք բայց ճաթելու չափ ընդ միշտ կերիցուք զի Դրամն ընդ մեզ է . եւ քանզի նազար ծնաւ այս ճամբան ցոյց տուաւ մեզ՝ զի Դրամն ընդ մեզ է . եւ որոյ ի շխանութիւն փորձանք եղև խեղճ ազգին՝ զի Դրամն ընդ մեզ է . եւ որ կոչի անուն կնոջ մեծի խորհրդատու Մալիամ՝ զի Դրամն ընդ մեզ է : եւ սարսափելի խորհրդակից զի Դրամն ընդ մեզ է : եւ մենք ենք ազգին տէր ի շխան զի Դրամն ընդ մեզ է : եւ ի շխան չարբըխութեան հայ հանդերձելոյ առաւ փախաւին՝ տէր Դրամը Լոնտոն է :

Եւ փառք հօր ոսկիին եւ որդւոյ արծաթին , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :



— Ինչպէ՞ս է տիկինը , ծով կը մտնայ կոր :

— Շնորհակալ եմ , — միւսիւ Տօքթօր . այո՛ կը մտնայ կոր ամա , տալի՜շ եղած ատենը ծովի ջուր կը կլլէ կոր եղեր , ասոր ճաշ մը չըլլա՛ր աճապա :

— Աէ՛ , աղբար , ատոր ճարը չի կայ , չիւնքիւ կնիկները ծովին տակն ալ իջնան նէ , նորէն բերաննին չը գոցուիր :

Ճաշարանի մէջ .

— Ի՞նչ է ան , կարօն , պնակս թաշկինակովդ կը սրբես :

— Հոգ չէ , պարօն , թաշկինակս արդէն ազտոտ է :

Յիսունամեայ մարդ մը իր կնոջը հետ հետեւեալ կատակաբանութիւնը ըրեր է .

— Քեզի բան մը ըսե՛մ , կնիկ , ես քեզի պիտի ձգեմ տէ , նորէն պիտի կարգուիմ :

— Քա՛ , ո՞ր օրիդ կը պէքլէյես կոր պէնտէն սանա գուլած գուլած ֆի՛րման :


— Ուն ըսես չըսես պիտի կարգուիմ , ամա կնքահար մը չեմ կրնար կոր գտնար քի . . .

— Հի՛շ մի փնտռեր , ժամկոց աղպարը ուղէ չուղէ պիտի պոնէ :

— Ի՞նչ պիտի բռնէ .

— Խաշալէ՛մդ :

Մեր Լժպալանկաի բաժանորդներէն չէ խեղրենք որ իրենք բաժնեգիրը յանձնեն Տիար Լ . Թորոսեանի :



ԾԱՆՕԹ ԴԵՄՔԵՐ

Թ.

Ի. — Ա. — Վ.

Միջահասակ, նիհար ու խորտեաշ երիտասարդ մ'է. սրածայր սև ձորուքը խիստ վայելչօրէն կտրուած, ծնօտը բիշ մը ծուռ՝ Սիւրեանիի նման. կապոյտ ակնոց մը, բարակ երիզով բռնուած է իր բաճկոնին կոճակէն :

Տարիքը 30 էն 32 կը կարծուի. « Ես ծնվել եմ կը գրէ՝ 65ին » : Արան գլուխը կոկիկ և նոփ նոր ամեն ատեն. ամեն եղանակի յարմար հագուստներ կը գտնուին իր ճամբորդութեան պայուսակին մէջ. որոնց մէկ մէկ ձեռքը 'ի Տրապիզոն, դերձակի մը գողցնելու դժբաղդութիւնը ունեցած է :

Քալուածքը մերթ դանդաղ և մերթ սրընթաց. ուսերը վեր տնկած, անիշխանական գործաւորի մը պէս կապարագոյն գլխարկը ետին նետած, յաւակնոտ համալսարանականի մը գոռոզ երեւոյթն ունի. շեշտակի նայուածքով մը ուղղակի աչքերուդ խորը կը թափանցէ ու հաստը ճոկան մը ձեռքը բռնած՝ պարտէզին մէջ անհատնում կը բալէ, միշտ խոհուն, միշտ մտազբաղ :

Ո՛վ է աս մարդը և ուրկից եկած, ո՞ր տեղացի է. որոշապէս չի գիտցուիր. կըսեն թէ բառասուն կաղապարէ անցած է, շատ բաներ տեսած, շատ բաներ երազած, շատ բաներ ծրագրած. բայց ի՞նչ ըրած է մինչև հիմա, աս չը գիտցուիր. ապագան է որ այդ գաղտնիքը օր մը մէջտեղ պիտի հանէ, թէև կըսեն թէ հատկապէս յիշատակարան մը կայ, բայց այդ հեռու է արկածալից ու նուիրուած կեանքի մը յոյսերով ու յոյզերով բեղուն անցեալի՝ մը ամբողջ ու կատարեալ ծանօթութիւնը տալէ :

Իբրև գաղափարի մարդ, Պ. Ի. Ա. մեծ յարգանքի արժանացած է որոշ ժամեր մը կողմէ. կը սիրուի. կը յարգուի. բարի շէյխի

մը պէս կը ժողուէ գլուխը իրենները, պայմանաւ որ ինքնիշխանացիս դասակարգէ ըլլան. ու ժամերով կը խօսի անոնց. լայն լայն գաղափարներ կը յայտնէ. ընկերային խնդիրներու վրայ տեսութիւններ կընէ. մէկ օրուան մէջ տիեզերքը կերպարանափոխելով՝ ապրելու պայմանները կը դիւրացնէ. պիտիջնարիս դասակարգը կը փրկէ աշուտ զարմանքներու ձեռքէն : Աբանչելի՝ մարդ, միտքըս կուգայ քամառ Գաթիպան, որ տեղ մը կը գրէ « Եւ եթէ մի օր, մի ժամ, մի րոպէ, աստուած լինէի մեր հողադնդին » : ու կը հարցնեմ ես ինծի թէ արդեօք այդ երկրին ջուրէն կամ օդէ՞ն է որ այս տեսակ արտակերպ գաղափարներ կը յղացուին :

Հատ ու շատեր կը տեսնէ, բայց եզրվբասի նման իր շուրջը մարդ չի տեսներ. ամենքն ալ հոսահոսներ են. թէև ատոնց հետ կը բարեկամանայ. կը պտտի ու. շատ անգամ քարեջուրի գաւաթները իմիսին կը պարպէ, բայց միշտ զգուշաւոր և կասկածոտ. իր մէկ բարեկամին գրած նամակի մը հետեւալ կտորը կը յիշեմ. « Այս տեղ օգտւոյն հերոսներ շատ գտնուում են. բայց աւմանն էլ հոսահոս. թէև խօսում եմ նրանց, ապշում եմ նրանց դատարկ ուղեղների վերա. բնաւ չեմ կարող ասել թէ՛ նրանցից մի լաւ բան դուրս կը գայ. հենց այդ պատճառաւ է որ հոսահոսներ անուանում եմ » :

Հատ բան գիտէ, շատ բան սուրված է. բայց գրածները հրատարակութեան տրուելէ առաջ խղճմտօրէն կը սրբագործին ու կուրծին իր . . . բարեկամներէն :

Մարդէ չը վախնար. վտանգէ փախչող, դասալիք ըլլող ու սպառնալիքի կոշիկ ձգողներէն չէ. կը ծիծաղի ապ Տղայ մարդոց վրայ ու հակառակ իր սովորութեան, գիշերը մինչև լուս փողոցները կը պտտի աներկիւղ, ճերմակ ֆանելա բաճկոնով մը, կուրծքը բաց, և գաւաղանը շարժելով :

Բնաւ չի սիրեր կիները, թէև անոնցմէ ալ հեռու չի փախչիր. բերանը երաժ է կընիկներէն. տարիներ առաջ, երբ տակաւին գպրոցական էր, յանկարծ « երկու սիրոյ »

մէջ կը մնայ. — կին և գաղափար. — կինը երես կը դարձնէ իրմէն, խեղճը կը տառապի, անքուն գիշեր մը կանցնէ ու տեսնելով որ չը պիտի յաջողի, ան ատեն « իրան նուիրում է, դէպ ի մի սուրբ նպատակ »:

Հատ անհանդարտ ու տաժանելի կեանք մը անցուցած է. իր խոստովանութեանը նայելով ամեն տեղէ և ամեն մարդէ հալածուած է. և թէ ոչ անկարելիին գոնէ դժուարին կեանքն վազած է. զօրաւոր վարչութիւններու հետ գործ ունեցած և ամեն ատեն հրաշքով օձիւր աղատած է:

Արդար խօսելու համար պէտք է ըսինք թէ այս մարդը փաղաքշանքը քիչ մը կը սիրէ. ու իր ներկայութեանը չի ներեր որ մէկը աչքաբացութիւն ծախէ. անոնք որ իր ուզած ատենը ճերմակին սև ու սևին ալ ճերմակ ըսեն՝ անոնք կըսենք. իր անբաւ շնորհացը արժանանալով, հանգիստ կապրին:

Եզրակացութիւն. Ան տեղը ուր շարժում, ոգեւորութիւն չի կայ, հոն գործ չունի աս մարդը, կոշիկները թոթուելուն պէս կը մեկնի առանց ետին նայելու. իր սկզբունքը եղած է միշտ շարժում՝ ստեղծել, գաղափարի ընդհարումներ առաջ բերել, լսարաններ հաստատել, տեղ մը սա պէս կը գրէ. « Էլի մի քաղաքում, մի երիտասարդութեան մէջ որ շարժում չի կայ, կռիւ չի կայ, ախր հոն կեանք էլ չի կայ. չը պէտք է անգործ նստիլ. կռիւ, շարժում ստեղծելու է. հենց գաղափարի մարդը այդպէս պէտք է անցկացնէ իր ժամանակը »:

Պ. Ի. Ա. կը ներկայացնէ դէմքը այն մարդուն՝ որ հետոյ բէնով է:

X

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ՔԹԱՆՈՏԻՆ ՕՐԻՆԱԳԻՐՔԸ

Ժամանակ մը՝ երբ բժախոտի գործածութիւնն շատ ընդհանրացած էր, տասներկու յօդուածէ բաղկացեալ օրինագիրք մը

խմբագրուած է եղեր ընչատուփի կիրառութեան համար, զոր կրցանք ձեռք բերել եւ մեր ընթերցողաց աստ ներկայել:

1. — Աջ ձեռքովդ ընչատուփդ առ:

2. — Աջէն ձախ ձեռքդ անցուր:

3. — Մատներովդ զարկ ընչատուփին վրայ:

4. — Ապա բաց գայն:

5. — Եւ ներկայ եղողներուն հրամանգուր:

6. — Յետոյ բեղի մօտեցուր:

7. — Ընչատուփիդ կողմնական հարուած մը տալով՝ բժախոտն մէկ կողմն հաւաքէ:

8. — Աջ ձեռքիդ մատներովը բժախոտը ա՛ռ:

9. Բժիդ տանելէ առաջ քիչ մ'ատեն ձեռքիդ մէջ բռնէ զայն:

10. — Յետոյ բժիդ տա՛ր:

11. — Ռնդունքդ սեղմէ՛ և վեր քաշէ բժախոտն առանց ծաղրելի շարժում մ'ընելու:

12. Ընչատուփդ գոցէ՛, գրպանդ դի՛ր և ապա ըշու փոնգտայ, հազայ և կապոյտ թաշկինակովդ քիթդ սրբէ:

ԿԾԾԻ ՄԸ

Կծծի մը, տանը մէջ ծառայելու համար իրեն ներկայացող սպասաւորի մը հետեւալ հրամանները տուեր է.

— Մտիկ ըրէ որ ըսեմ. ես շատ մաքրասէր մարդ մ'եմ, տանը ամեն կողմերը մաքուր տեսնելու եմ. ջուրին գաւաթները, սեղանին սպասները միշտ մաքուր պիտի ըլլան. պատուհաններու ապակիները ամեն օր մաքրուելու է. դարանները, գաւիթը և սանդուղները մաքուր պիտի բռնես, վերջապէս ամեն բան մաքուր ըլլալու է:

— Շատ աղէկ պարոն. վրաս դուրս ալ մաքուր պիտի ըլլայ, այնպէս չէ՞:

— Օ՛. . . հարկաւ, հարկաւ:

— Ուրեմն հաճեցէք ինձ ձեռք մը նոր

հագուստ առնել, ըստ որում այս հագած-
ներս թէ հին եւ թէ աղտոտ են :

Կծծին նկատելով որ այս առաջարկը
խոր քսակին պիտի դպչի, կը գոչէ .

— Վա՛յ, վա՛յ, վա՛յ . դուն հիմակուց
գործը աղտոտեցիր, ամենեւին իմ բանիս
չես գա՛ր . երթաս բարո՛ւ :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

(Սթանս Բոթոփիկ և Ընկ.)

Վառնա

Պ. Հրանդ այնչափ ուրախ զուարթ
մեկնեցաւ ի Պոլիս, որ ըստ սովորութեան,
ռէրիւպլիք գլխարկը մոռցաւ ֆէսի փո-
խելու . ու երբ ոտքը շոգենաւին տախ-
տակամածին վրայ դրաւ, երկար շունչ
մը առնելով, հետեւեալ բանախօսութիւնը
ըրաւ .

«Վերջապէ՛ս, տեսցեն ատելիք իմ
և ամաչեսցեն, զի դու տէրօգնեցեր ինձ
ինձ և մխիթարեցեր զիս» :

Այս բանախօսութեան մէկ օրինակը
հրեղէն սուրհանդակով Արփիարին ղըր-
կուեցաւ :


Երկուշաբթի գիշեր երկրաշարժի
զօրաւոր ցնցում մը զգացուեցաւ Վառ-
նաի մէջ, որ բաւական երկիւղ ազդեց,
մանաւանդ «Աշխարհ» ի խմբագիրներուն,
որոնք յուսահատած՝ մենք աս Աշխար-
հէն վաղ անցանք ըսելով հրաժարական-
նին մատուցին Վլայմսօսի տպարանին :

Հանդուցեալ Խուզակի տպարանին
մէջ առժամապէս պիտի հիւրընկալուի
«Աշխարհ» :

Էյիպ

«Աշխարհ»ը Ռուսնուգ փոխադրե-
լու համար յատուկ վակօն մը շինելու
հրամանը տրուեցաւ օյինճախճչներու
քէօչէ ուստասի Պէքիր աղաին :

Գիշերները Յրդ Թաղի մէկ երկու տու-
ներու պատուհաններուն առջև սլքտալով ներ-
սի անցած խօսակցութեանց տկանջ կախող հե-
տաքրքիր պարոնին վերջնապէս կազդարարուի
որ, եթէ անգամ մըն ալ միւսնոյն ընթացքին
մէջ գտնուի, խօշիւս մը տաք ջուրով պաշ-
տան—էնմէի պիտի հանդպի :



Աստիկ աղա, նա՞ւրը, գիշերները բիրե
թախթապիթիէն թաճիղ կըլլա՞ք կոր :

— Հիմակ ու հիմայ գիշերները մինչև
լուս նստելնուս համար ատանկ թաճիղութիւն
մը իմացած չունինք :

— Հէ՞, մինչև լուս նստիլ կըլլա՞յ ա-
տանկ կարճ գիշերներուն :

— Պաշխա ճար չի կայ, հէ՛մ կըլլայ
կոր :

— Է՛յ, ո՞ր վախիթ կը բնանաք կոր :

— Յօրեկները մինչև իրիկուն գործեր-
նիս ի՞նչ է, կը բնանանք իշթէ :

Անցեալ օր, երկու ծերունիներ Մու-
սալլաի սրճարաններէն մէկուն առջև նստած,
կը խօսակցէին .

— Պու՛ կիւն հա՛վա կիւզէլ տիր, սէ-
նինլէ թրանգայա օթուրուպ պիղիմ գերեզ-
մանա գատար կիտէլիմ մի :

— Գարտա՛շ, պիր ազ վագըթտան պի-
զի օրայա կէօթիւրէճէքլէր տիր, շիմտի պօշ
պօշուեսա նի՛շիւն փարատան չըգալըմ :

Ովրեստես աղան իր վեց տարեկան փոք-
րիկ աղջիկը ծնգացը վրայ առնելով, կըսէ .

— Ինձի համբոյր մը տաս նէ՛ քեղի
իրիկուան խոսթիով շէքէր պիտի բերեմ :

— Չեմ հաւատար, կը պատասխանէ
փոքրիկը, ամեն ատեն մայրիկիս ալ ատանկ
կըսես կոր ամա՛ բան մը չես առներ :

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

Անցեալ իրիկուն, Հապերմանի գարեջր-
բաան մէջ մէկ քանի երիտասարդներ կը
խօսակցէին այսպէս .

— Նաոր՛ւ պէ՛. մկրը Հապը եռութ-
տունն՞ը մը իքի արգատաշ .

— Պրա՛գ հօլան . եալարը եազըլը տի-
եարա հապարընը գան թէմիզլէմէք իչիւն
էյի տիր տէյէրէք պիզէ եռութտուրտու .

— Քի՞մ՝ պս .

— Պիշիմ՝ միւսիւ քայ . ազատէ օլուր-
սընըզ գան հարարէթինտէն , պու հապարը
եռտունըզ տէտի :

— Պա՛հ , եօգ տըր օլաճաղը . զաթէն
պիր թանէնին նէսի՞ օլուր , պիր գաշ թանէ
օլմալըլըտը քի մագպոչլա կէչսին :

— Նէ՞ սէօյլէյօրսըն պէ՛ , համամտան
հէնուզ չըգմը՛ հարարէթի հալտէ եռութտուգ .
կէճէ սուպահա գատար , միտէ պուռ՛ն՛ն է-
տէյօր , սէնին օնուելա օղրաշտըղըն վա՛ր մը .

— Եօգ տըր օլաճաղը , օ գատար չա-
քըք թէէսիր իթտի՞ մի եա .

— Թէէսիր էթտի տէ սէօ՞ղ մի . ճա-
նըմ աղլմա կէլիյօր ըտը . լաքին ալաճաղը
օլսուն :

— Նէ՞ եաբաճագսըն , տալմա՞ մը .

— Պիլմէմ՝ արթըգ .

— Է՛հ , սուլֆա պրագըրլար .

— Սուլֆա պրագըրլար իսէ՛ պէն տէ
թէմիզէ աքեղ էտէրիմ .

— (Ունկնդիր մը) Հայերէն հօսեցէք ,
նստողները մեզ մտիկ կընեն կօր :

— Օ տէյիլ ամա , արգատաշըն նա-
սըլ տըր .

— Պիլմէմ , օ տա մեծ—իոր օլտու-
ղունտան տահա տույմամը ըմըշ , կալիպա-
յա պէքլէյօր . տօգթօր գալուստեանըն հա-
պը օլմալը քի թէէսիր էթտին տէյօրլար :

— Տէսէնէ՞ , պու հապար սիզին պա-
շընըզա պէլա աչաճագ ըտը :

— Նէ՞ սէօյլէյօրսըն , ալլահ պէլասը-

նը վէրսին , ազ գալտը պիւսպիւթիւն հապը
եռտաճագտըգ .

ՍԵՖԵՐ

ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏՆԵՐ

ՃՄԼՈՒԱԾ ԲՐԴԵՂԷՆ ՀԻՒՍՈՒԱԾՔԸ
ՇՏԿԵԼ

Ձեռքի վրայ գործածուած բրդեղէն
հիւսուածքն էթէ ճմլուած է , դիւրին միջոց
մը կայ զայն բոլորովին շտկելու եւ նոր ե-
րեւոյթ մը տալու :

Ահուատիկ .

Ջուրի մէջ քիչ մը խէժ (զամխ) եւ քիչ
մը լեղակ (չապ) խառնելով սրսկէ՛ այդ ջուրը
հիւսուածքին հակառակ կողմը . յետոյ ար-
դուկով անցիր վրայէն : Հիւսուածքդ այնքան
կը գեղեցկանայ , որ կը կարծուի թէ կար-
կահի վրայ բանուած ըլլար :

Բոժոժիկ իր բարեկամ Պիժակէն ձեռ-
քովը Ռուսճուրէն բերել տուած է հետեւեալ
պատկերը , որ մեր բարկենդանի բայլաչոն կը
ներկայացնէ , Քառաս ժողուելու վիճակին
յէջ :



(Նաթիւռէլ)

ԱԶԴ



ԿՈՇԿԱԿԱՐ
ՍՏԵՓԱՆ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ

Մուսալլա, հաճի Հասան աղաի օթելին
տակ

Ճաշակաւոր, տոկուն, ձեւաւոր կոշիկ
շինել տալ ուզողը պէտք է գիմէ Պ. Ստե-
փան Խօրասանճեանի, որուն ճարտարութիւնը
մէկ փորձով երևան կելլայ:
Դիները գիրամատչելի:

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԴԵՍԻ

Ամէն լեզուէ հրատարակութիւնք:
Այցետոմս, հասցէտոմս, նոմակա-
ելուխ, հրաւիրատոմս, բարենիշ. տոմ-
սակ ևայլն ևայլն թէ՛ պարզ և թէ՛
ոսկեզօծեալ մէկ քանի գոյներով կը տը-
պագրուին: Քաղաքներէ եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին.
Գին գահացուցիչ: Դիմել Հայելիի խըմ-
բագրութեան:



ՐԳԱՐԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ

Բովանդակութիւն թատերա-
կան երգերու և պարերու.
նաև վիճակ ընկերական:
Գին մէկ ֆրանք:

Վայրկենական Տպագրութիւն
ԱՅՅԵՏՈՄՍԻ

100 հատը 2 ֆր.ի կը տպագրուի և ա-
նոր տուփին մէջ կը գտնուի Այցետոմսի գոր-
ծածութեան հրահանգը պարունակոր տէտրակի
մը, որուն կողքին վրայ այցետոմսին տիրոջ ա-
նունը տպագրուած պիտի ըլլայ: Դիմել Խմբա-
գրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթատարի ծախք 30 սանդիմը
յանձնարարողին վրայ է: Դրամի փոխարէն
Պոլկարական 5, 10 և 15 սանդիմնոց նա-
մակագրօջմ կ'ընդունուի: Կտնխիկ:

«Հայելի»ի Ա. տարւոյ թիւերը
կազմեալ կը վաճառին գին տասը ֆր.
թղթատարի ծախքը մեր վրայ:



ԳՈՒՀԱԿ
Ա. Պ. Ա. Պ. Ա. Յ. Ի
Կամ Զուարճալի Բաղդաջոյց
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզ-
բօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
ծախուի մեկ ֆրանքի, թղթատարի ծախքով
գիմել Խմբագրութեան:



ՔԱՇԱՐԱՆ ԵՎ ԶԲՕՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԻՒՖԵՆՃԵԱՆ և ԸՆԿ.

Հաճի Բանաբօրին ճիշդ գէմը

Հարսանեաց և խնճօքներու սպասներ
ալ կը գտնուին, որոնք գիւրտմատչելի գի-
ներով վարձու կը տրուին:

Отговоренъ-редакторъ: Н. Драгулев
Печатница «Взаимость» — Варна.